



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբերի 22 - ի թիվ 5/8

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում պետական կառավարման, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման ծրագրերի ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԲԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԽ խորհրդի
2013թ. մարտի 22-ի թիվ 5/8 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏԱՍԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի գործունեության տարեկան ծրագրի 2.1 կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի հունվարի 24-ի թիվ 2/5 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ պետական կառավարումը հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում ու տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման համար ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ պետական կառավարումը հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում ու տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման համար ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում և բյուջետային մուտքերի ապահովում, ինչպես նաև պետական սեփականության կառավարում և օգտագործում:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գործող պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջան՝ 2010 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

Ստուգման ընթացքում կատարվել է փաստաթղթերի ուսումնասիրություն:

Վերլուծության փուլում ամփոփվել են դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության ծավալը՝

Իրականացված դիտարկման արդյունքում ստուգման համար էական են համարվել պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից 2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսներին պետական բյուջեի օգտին նշանակված տուգանքները, ինչպես նաև «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական պատվերի շրջանակներում պետական բյուջեի «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» ծրագրով հատկացված միջոցները:

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային տեսչությունը «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարում է ստուգումներ, հետազոտություններ և կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ: ՀՀ կառավարության 28.07.2011թ. թիվ 1183-Ն որոշումով պետական հրդեհային տեսչության կանոնադրությունում կատարվել են փոփոխություններ՝ պետական հրդեհային տեսչությունը վերանվանվել է պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն (այսուհետ՝ Տեսչություն): Տեսչությանը վերապահվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով նախատեսված վերահսկողության իրականացումը և արտադրական վտանգավոր օբյեկտներին առնչվող օրենքով սահմանված այլ գործառնությունների իրականացումը: ՀՀ կառավարության

որոշումով փոփոխվել է նաև Տեսչության կառուցվածքը, ըստ որի՝ Տեսչության կազմում գործում է չորս կառուցվածքային ստորաբաժանում և տասնմեկ տարածքային մարմին՝ Երևանի ու մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություններ (այսուհետ՝ ՄՀ և ՏՍՏ):

2010 և 2011 թվականներին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցներից Տեսչության պահպանման ծախսերին ուղղվել է համապատասխանաբար՝ 223,517.0 հազ. դրամ և 231,718.5 հազ. դրամ, որից ավելի քան 95 %-ը բաժին է ընկել աշխատանքի վարձատրության ծախսերին, իսկ մնացած գումարը՝ Տեսչությանը ամրացված 12 ավտոմեքենայի վառելիքի ձեռք բերման և գործողման ծախսերին:

2010, 2011 և 2012 թվականներին Տեսչությունը իրականացրել է պետական հրդեհային հսկողություն համապատասխանաբար՝ 37000, 41497 և 45234 պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների կողմից հրդեհային անվտանգության պահանջների կատարման նկատմամբ: 2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսների ընթացքում հրդեհային անվտանգության կանոնների խախտումների դեպքերով Տեսչության կողմից իրականացվել է 3712 վարչական վարույթ, որից 604 վարչական վարույթի գործ կարճվել է: Հրդեհային անվտանգության կանոնները խախտելու դեպքերով վարչական իրավախախտումներ կատարելու համար 2010 թվականին նշանակվել է 33,450.0 հազ. դրամ, 2011 թվականին՝ 50,625.0 հազ. դրամ և 2012 թվականի ինն ամիսներին՝ 32,891.0 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսների ընթացքում հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար նշանակված տուգանքների վերաբերյալ

հազ. դրամ

Ստորաբաժանման անվանում	Վարչական վարույթի գործ	Տուգանք
Տեսչություն	5	350.0
Երևանի Հ և ՏՍՏ	723	30,480.0
Շիրակի ՄՀ և ՏՍՏ	391	11,180.0
Լոռու ՄՀ և ՏՍՏ	285	13,201.0
Գեղարքունիքի ՄՀ և ՏՍՏ	253	10,150.0
Կոտայքի ՄՀ և ՏՍՏ	281	9,885.0
Արագածոտնի ՄՀ և ՏՍՏ	152	6,525.0
Սյունիքի ՄՀ և ՏՍՏ	147	3,980.0

Տավուշի ՄՀ և SUS	180	9,135.0
Արարատի ՄՀ և SUS	228	9,295.0
Վայոց Ձորի ՄՀ և SUS	165	4,260.0
Արմավիրի ՄՀ և SUS	298	8,525.0
Ընդամենը	3108	116,966.0

ՀՀ վերահսկիչ պալատի նախորդ վերահսկողությամբ արձանագրվել էր, որ 2008 և 2009 թվականներին Տեսչության կողմից հրդեհային անվտանգության կանոնները խախտելու դեպքերով իրականացվել էր 873 վարչական վարույթ և վարչական իրավախախտումներ կատարելու համար պետական բյուջե գանձվել էր 23,082.0 հազ. դրամ տուգանք: Նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ տարեց տարի ավելացել է վարչական վարույթների թիվը, և 2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսներին Տեսչության կողմից ավարտված 3108 վարչական վարույթներով նշանակվել է 116,966.0 հազ. դրամ տուգանք: Նույն ժամանակաշրջանում կարճված վարչական վարույթների թիվը 55.7 %-ից նվազել է մինչև 16.3 %: Ստուգմամբ պարզվել է, որ առանձին դեպքերում վարչական վարույթները կարճվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված կարճման հիմքերին ներկայացվող պահանջներին ոչ համապատասխան: Անհիմն կարճվել է և տուգանք չի նշանակվել Արագածոտնի ՄՀ և SUS կողմից՝ թիվ 3556 արձանագրությունով, Արարատի ՄՀ և SUS կողմից՝ թիվ 2502 և թիվ 2515 արձանագրություններով վարչական վարույթի գործերը:

2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսներին հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար նշանակված տուգանքներից ըստ գանձապետական հաշվետվությունների պակաս է մուտք եղել 3,293.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

Ստուգմամբ պարզվել է նաև, որ հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար վարչական վարույթի առանձին գործերում բացակայում են արձանագրություններով նշանակված տուգանքների վճարման անդորրագրերը (աղյուսակ 2):

**2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսների ընթացքում հրդեհային
անվտանգության կանոնները խախտելու համար
նշանակված տուգանքների վերաբերյալ**

Ստորաբաժանման անվանում	Արձանագրության համարը		
	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Արարատի ՄՀ և SUS	1713, 1725, 1727, 2613	3204	4255, 5171, 5184
Արմավիրի ՄՀ և SUS		3333	5249
Երևանի Հ և SUS		3605, 3612	
Վայոց Ձորի ՄՀ և SUS		3293, 3294	
Կոտայքի ՄՀ և SUS		3734	

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չվերացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ 150.0 հազ. դրամ: ՀՀ վերահսկիչ պալատի նախորդ վերահսկողության արդյունքներով արձանագրվել էր, որ 2008 թվականին Տեսչության կողմից տրված 1448 կարգադրագրերով արձանագրված խախտումները չվերացնելու համար առանց տուգանք նշանակելու տրվել է կրկնակի կարգադրագիր: Ստուգմամբ պարզվել է, որ 2010, 2011 և 2012 թվականներին ՄՀ և SUS-ների կողմից տրված կարգադրագրերով արձանագրված խախտումները չվերացնելու համար առանց տուգանք նշանակելու տրվել է 55 կրկնակի կարգադրագիր, որից Երևանի Հ և SUS կողմից տրվել է 17, Արագածոտնի ՄՀ և SUS կողմից՝ 15, Արարատի ՄՀ և SUS կողմից՝ 13 և Վայոց Ձորի ՄՀ և SUS կողմից՝ 10 կրկնակի կարգադրագիր: Արդյունքում, առանց տուգանք նշանակելու կրկնակի կարգադրագիր տալու հետևանքով պետական բյուջե պակաս է մուտք եղել 8,250.0 հազ. դրամ տուգանք:

Բացի այդ, Արմավիրի ՄՀ և SUS 2010 թվականին հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար կայացրած վարչական տույժ տալու մասին որոշումներով նախկինում տրված կարգադրագրերով առաջարկված (ներկայացված) միջոցառումները չկատարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված է 150.0 հազ. դրամ տուգանքի փոխարեն նշանակել և զանձել է մեկ դեպքում՝ 50.0 հազ. դրամ, մեկ դեպքում՝ 60.0 հազ. դրամ և մեկ դեպքում՝ 25.0 հազ. դրամ տուգանք: Փաստորեն, տրված կարգադրագրերի պահանջները չկատարելու համար

կայացրած 3 որոշումներով Արմավիրի ՄՀ և ՏՄՏ պակաս է նշանակել և գանձել 315.0 հազ. դրամ տուգանք, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

2011 թվականից Տեսչությունը իրականացրել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության կանոնների և նորմերի խախտման դեպքում կարգադրագրերի կիրառում, վարչական վարույթի կատարում և տուգանքների նշանակում: 2011 թվականին «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության կանոնները և նորմերը խախտելու համար վարչական վարույթի երեք գործով Տեսչության կողմից նշանակվել է 3,000.0 հազ. դրամ տուգանք, 2012 թվականի ինն ամիսների ընթացքում 53 վարչական վարույթի գործերով՝ 54,500.0 հազ. դրամ տուգանք:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 23.09.2010թ. թիվ 88-Ա հրամանով նախարարությունում ստեղծվել է վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները կամ անգործությունը վերադաս վարչական մարմնում բողոքարկելու համար բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկման հանձնաժողովը տեխնիկական անվտանգության կանոնները և նորմերը խախտելու համար տուգանված անձանց բողոքների քննությամբ ինը դեպքում կարճել է տուգանք նշանակելու մասին Տեսչության որոշումները: Ստուգմամբ պարզվել է, որ բողոքարկման հանձնաժողովն իր 12.09.2012թ. որոշումով առանց հիմնավորման կարճել է Տեսչության 04.05.2012թ. որոշումով «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ի վերելակը տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցնելու համար նշանակված 1,000.0 հազ. դրամ տուգանքը, և բավարարվել է նախազգուշացումով: Սակայն, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով այդ իրավախախտման համար՝ որպես տույժի տեսակ, սահմանված է միայն տուգանք, և տվյալ դեպքում պետական բյուջեի օգտին չի նշանակվել և չի գանձվել 1,000.0 հազ. դրամ:

Մնացած 47 վարչական վարույթի գործերով նշանակված տուգանքներից պետական բյուջե մուտք է եղել 22,258.6 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ վարչական վարույթի 9 գործ ավարտվել է, տուգանք նշանակելու մասին 24 որոշում բողոքարկվել է դատական կարգով ու գտնվում է վարչական և վարչական վերաքննիչ դատարանների վարույթում, 5 գործ գտնվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովի վարույթում, ևս 9 գործերով նախարարությունը տուգանված անձանց հետ կնքել է հաշտության պայմանագրեր և

կազմել է տուգանքի վճարման ժամանակացույց, որով նշանակված 9,000.0 հազ. դրամ տուգանքից առ ստուգման պահը պետական բյուջե վճարվել է 2,314.0 հազ. դրամ:

Փաստորեն, 2011 և 2012 թվականներին տեխնիկական անվտանգության կանոնները և նորմերը խախտելու համար Տեսչության կողմից նշանակված 48,500.0 հազ. դրամ տուգանքից պետական բյուջե ենթակա է վերականգնման 26,241.4 հազ. դրամ տուգանք:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: ՀՀ վերահսկիչ պալատի նախորդ վերահսկողությամբ արձանագրվել էր, որ արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող ավտոտեխասարկման ոլորտում շահագործվող ամբարձիչները գրանցված չեն ռեեստրում: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 2010, 2011 և 2012 թվականներին 400-ից ավելի ամբարձիչներ անցել են տեխնիկական անվտանգության փորձաքննություն և գրանցվել են արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում:

Ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ու Պետական եկամուտների կոմիտեի կողմից հաշվառված արտադրական վտանգավոր համարվող օբյեկտներից առ ստուգման պահը ռեեստրում գրանցված չէ չորս հանք, չորս ԱԳԼՃԿ և 25 բենզալցակայան (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Ռեեստրում չգրանցված արտադրական վտանգավոր օբյեկտներ

Շահագործող	Հասցե
«Ավան-2000» ՍՊԸ	ք. Երևան, Վարդաշենի բազայտի հանք
«Արս Ընդ Կար» ՍՊԸ	ք. Երևան, Ջրվեժի գիպսակավերի և բազալտի հանք
«Ջի Բեյ Ջի Սթոն» ՍՊԸ	ք. Երևան, Սպանդարյանի բազալտի հանք
Վլադիմիր Գրիգորյան Ա/Չ	ք. Երևան, Արցախի 143, բենզալցակայան
Վրեժ Կարապետյան Ա/Չ	ք. Երևան, Ավան 6 փող. 1 նրբ. 18, բենզալցակայան
Նաիրուհի Աբրահամյան Ա/Չ	ք. Երևան, Սարկավազի 69, բենզալցակայան
Արթուր Մուրադյան Ա/Չ	ք. Երևան, Շոպրոմի 6, բենզալցակայան
Ռաֆաել Ավանեսով Ա/Չ	ք. Երևան, Արցախի 32ա, բենզալցակայան
Էդուարդ Օհանյան Ա/Չ	ք. Երևան, 16 թաղ. 18, բենզալցակայան
Միքայել Մելքոնյան Ա/Չ	ք. Երևան, Մոլորակյան 10, բենզալցակայան
Սամվել Ենգիբարյան Ա/Չ	ք. Երևան, Բաշինջաղյան 1 նրբ. 8, բենզալցակայան
Ռուբեն Մովսիսյան Ա/Չ	ք. Երևան, Գրիբայեդով-Մյասնիկայն խաչմերուկ, բենզալցակայան
Գոռ Չաքարյան Ա/Չ	ք. Երևան, Մոսե-Գյուլբեկյան խաչմերուկ, բենզալցակայան

Գարիկ Մոսյան Ա/Չ	ք. Երևան, Արցախի 38, բենգալցական
Ռաշիդ Աբրահամյան Ա/Չ	ք. Երևան, Արցախի 32ա, բենգալցական
«Մաքուր հուր» ՍՊԸ	Շիրակի մարզ, գ. Ախուրյան, նավթամթերքի պահեստ
Ա. Ազարյան Ա/Չ	Շիրակի մարզ, գ. Ազատան, ԱԳԼՃԿ
«Ռուր-Ռուս» ՍՊԸ	Շիրակի մարզ, ք. Գյումրի Տերյան փ. և Երևանյան խճուղու խաչմերուկ, բենգալցական
«Անի Վենետրա» ՍՊԸ	Լոռու մարզ, տուֆի հանքավայր
«Թեգասար» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Արայեզ, ԱԳԼՃԿ
«Մոլյան» ՍՊԸ	Արարատի մարզ, ԱԳԼՃԿ
«Այ Ան Որ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, գ. Ն. Բագմաբերդ, ԱԳԼՃԿ
Անդրանիկ Ալեքսանյան Ա/Չ	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Նարեկացու 85
Վաղարշակ Քամայան Ա/Չ	Արագածոտնի մարզ, բենգալցական
Հակոբ Խարբերդյան Ա/Չ	Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Էջմիածին-Մարգարա խաչմերուկ, բենգալցական
Օնիկ Մելքոնյան Ա/Չ	Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Էջմիածին-Մարգարա խաչմերուկ, բենգալցական
Գարիկ Գասպարյան Ա/Չ	Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Նորապատ 5
Արտաշես Մնոյան Ա/Չ	Արմավիրի մարզ, գ. Վարդաշեն բենգալցական
Արտյոմ Դազարյան Ա/Չ	Արմավիրի մարզ, գ. Հուշակերտ բենգալցական
Քերոբ Բաղդասարյան Ա/Չ	Արմավիրի մարզ, գ. Ջանֆիղա բենգալցական
Նունե Շմավոնյան Ա/Չ	Արմավիրի մարզ, գ. Երասխահուն բենգալցական
Աշոտ կարապետյան Ա/Չ	Արմավիրի մարզ, գ. Արմավիր բենգալցական
Աշոտ Յագիչյան Ա/Չ	Արմավիրի մարզ, գ. Հոկտեմբեր բենգալցական

Տեսչության կողմից անհրաժեշտ է իրականացնել ռեեստրում չգրանցված այդ արտադրական վտանգավոր օբյեկտների վարչական վարույթներ, և դրանք շահագործող յուրաքանչյուր անձի նկատմամբ նշանակել օրենքով սահմանված 1,000.0 հազ. դրամ տուգանք:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

2010, 2011 և 2012 թվականներին պետական բյուջեի՝ «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» ծրագրով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն) հատկացվել է համապատասխանաբար՝ 39,172.0 հազ. դրամ, 42,114.8 հազ. դրամ և 41,857.9 հազ. դրամ:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով Կենտրոնին վերապահված էր արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, փորձաքննությունների իրականացման կանոնակարգերի մշակման, ինչպես նաև տեխնիկական անվտանգության փորձաքննությունների իրականացման և փորձագիտական եզրակացությունների տրամադրման լիազորություն:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում 2010 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխություններով

Կենտրոնի լիազորությունները կրճատվել են՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման լիազորությունը փոխանցվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հավատարմագրման և լիցենզավորման գործակալությանը, և պետական պատվերի շրջանակներում Կենտրոնին վերապահվել է փորձաքննությունների իրականացման տեխնիկական կանոնակարգերի մշակման լիազորությունը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի գրության հիման վրա 2010 թվականին ՀՀ վարչապետի հանձնարարականով ժամանակավորապես կասեցվել է պետական մարմինների կողմից տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակումը և տեխնիկական կանոնակարգերի ընդունման գործընթացը, որից հետո՝ առ ստուգման պահը, նոր տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել:

2012 թվականին Կենտրոնը պայմանագրային հիմունքներով տնտեսավարողների կողմից վճարված գումարների դիմաց, ինչպես նաև տեխնածին վթարների և արտադրական դժբախտ պատահարների դեպքերում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրված հանձնարարականներով իրականացրել է միայն տեխնիկական անվտանգության փորձաքննություններ և փորձագիտական եզրակացությունների տրամադրում: Ընդ որում, տնտեսավարողների հետ կնքած պայմանագրերով իրականացվող փորձաքննությունների սակագներում ներառված է Կենտրոնի պահպանման անհրաժեշտ ծախսերը՝ աշխատածախս, էներգետիկ, կապի, կոմունալ, վերադիր և այլ ծախսեր, իսկ նախարարության հանձնարարականներով իրականացված փորձաքննությունների ծախսերը կանոնակարգված չեն և չեն հաշվառվում:

Փաստորեն, պայմանավորված Կենտրոնի գործառույթների կրճատումով և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հանձնարարականներով իրականացվող փորձաքննությունների ծախսերի կանոնակարգման և հաշվառման բացակայությամբ հնարավոր չէ գնահատել Կենտրոնի պահպանման ծախսերի համար ՀՀ պետական բյուջեից 2012 թվականին հատկացված 42,114.8 հազ. դրամի ծախսի արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. 2010, 2011 թվականներին Տեսչության կողմից երեք դեպքում վարչական վարույթները կարճվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված կարճման հիմքերին ներկայացվող պահանջներին ոչ համապատասխան:
2. 2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսներին հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար նշանակված տուգանքներից պակաս է մուտք եղել 3,293.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
3. 2010, 2011 և 2012 թվականներին ՄՀ և ՏՄՏ-ների կողմից տրված կարգադրագրերով արձանագրված խախտումները չվերացնելու համար առանց տուգանք նշանակելու տրվել է 55 կրկնակի կարգադրագիր, որի հետևանքով պետական բյուջե պակաս է մուտք եղել 8,250.0 հազ. դրամ տուգանք:
4. Արմավիրի ՄՀ և ՏՄՏ-ը 2010 թվականին նախկինում տրված կարգադրագրերով առաջարկված միջոցառումները չկատարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված է 150.0 հազ. դրամ տուգանքի փոխարեն նշանակել և գանձել է մեկ դեպքում՝ 50.0 հազ. դրամ, մեկ դեպքում՝ 60.0 հազ. դրամ և մեկ դեպքում՝ 25.0 հազ. դրամ տուգանք, կամ պակաս է նշանակել և գանձել 315.0 հազ. դրամ տուգանք, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:
5. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովն առանց հիմնավորման կարճել է Տեսչության 04.05.2012թ. որոշումով «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ի վերելակը տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցնելու համար նշանակված տուգանքը, և բավարարվել է նախազգուշացումով: «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով այդ իրավախախտման համար՝ որպես տույժի տեսակ, սահմանված է միայն տուգանք, և տվյալ դեպքում պետական բյուջեի օգտին չի նշանակվել և չի գանձվել 1,000.0 հազ. դրամ:
6. 2011 և 2012 թվականներին տեխնիկական անվտանգության կանոնները և նորմերը խախտելու համար Տեսչության կողմից նշանակված 48,500.0 հազ. դրամ տուգանքից պետական բյուջե մուտք չի եղել 26,241.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:
7. Ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ու Պետական եկամուտների կոմիտեի կողմից հաշվառված արտադրական վտանգավոր համարվող օբյեկտներից առ ստուգման պահը

ռենստրում գրանցված չէ չորս հանք, չորս ԱԳ-ԼՃԿ և 25 բենզալցակայան, որի համար օրենքով սահմանված է 1,000.0 հազ. դրամ տուգանք:

8. Պայմանավորված Կենտրոնի գործառույթների կրճատումով և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հանձնարարականներով իրականացվող փորձաքննությունների ծախսերի կանոնակարգման և հաշվառման բացակայությամբ հնարավոր չէ գնահատել Կենտրոնի պահպանման ծախսերի համար ՀՀ պետական բյուջեից 2012 թվականին հատկացված 42,114.8 հազ. դրամի ծախսի արդյունավետությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝

- կանոնակարգել նախարարության հանձնարարականներով իրականացվող տեխնաժին վթարների, արտադրական դժբախտ պատահարների և այլ դեպքերում տեխնիկական անվտանգության փորձաքննությունների գործընթացը և ծախսերի հաշվառումը:
- ձեռնարկել միջոցներ՝ վերականգնման ենթակա գումարների մուտքը պետական բյուջե ապահովելու ուղղությամբ:

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությանը՝

- ռենստրում չգրանցված արտադրական վտանգավոր օբյեկտները շահագործող անձանց ենթարկել օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի պահանջի՝ մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատ գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

ՀՀ պետական բյուջե վերականգնվող գումարները փոխանցել ՀՀ վերահսկիչ պալատի անվամբ բացված՝ «Պետությանը պատճառված վնասների փոխհատուցումից մուտքեր» /900005281515/ հաշվին, կամ Գանձապետական համակարգի այլ եկամտային հաշվին՝ հաշվի սկզբում նշելով «96» կոդը:



« _____ » _____ 20

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

№ _____

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

*Ի կապարումն ՀՀ վարչապետի 2013թ. ապրիլի 5-ի
թիվ 02/23.14/4573-13 հանձնարարականի*


Հարգելի պարոն Սարգսյան

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 4-ի թիվ 225-Ա որոշման 2-րդ կետի՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում պետական կառավարման, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման ծրագրերի ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին>> թիվ 5/8 որոշման կապակցությամբ ներկայացնում եմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բացատրություններն ու առարկությունները:

Առդիր՝ 8 էջ:

Հարգանքով՝

Նախարարի ժամանակավոր
պաշտոնակատար

 Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

*Կապարող՝ Վ. Աճեմյան
Հեռ.՝ 31-77-47*

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ վերահսկիչ պալատի իրականացված վերահսկողության արդյունքների և ընթացիկ հաշվետվության եզրակացության վերաբերյալ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության (այսուհետ՝ տեսչություն) բացատրությունները.

1. Տեսչության կողմից կարճվել են վարչական վարույթներ (երեք դեպքում) ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված կարճման հիմքերին ներկայացվող պահանջներին ոչ համապատասխան:
2. հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար նշանակված տուգանքներից պակաս է մուտք եղել 3,293.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգման պետական բյուջե:
3. կարգադրագրերով արձանագրված խախտումները չվերացնելու համար առանց տուգանք նշանակելու տրվել է 55 կրկնակի կարգադրագիր, որի հետևանքով պետական բյուջե պակաս է մուտք եղել 8,250.0 հազ. դրամ,
4. Արմավիրի տեսչությունը կարգադրագրերով առաջարկված միջոցառումները չկատարելու համար երեք դեպքերում նշանակել է տուգանք՝ 150.000 դրամից պակաս գումարով (երեք դեպքով՝ 315.0 հազ. դրամ պակաս), որը ենթակա է վերականգման,
5. տեխնիկական անվտանգության բնագավառի օրենսդրությունը խախտելու համար նշանակվել է 48,500.0 հազար դրամ տուգանք, այդ գումարից պետական բյուջե մուտք չի եղել 26,241.4 հազ. դրամը, որն էլ ենթակա է վերականգման,
6. ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ առկա են արտադրական վտանգավոր օբյեկտներ, որոնք գրանցված չեն ռեեստրում:

Տեսչությունում բոլոր վերոհիշյալ հանգամանքները մանրամասն քննարկվել են, ինչպես նաև ձեռնարկվել են միջոցներ՝ թերացումներն ու բացթողումները վերացնելու համար:

Մասնավորապես. բոլոր տարածքային մարմիններին հանձարարվել է արձանագրել առկա արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում չգրանցվելու և տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննություն չանցնելու փաստերը: Հանձնարարվել է հատուկ ուշադրություն դարձնել և որակապես բարելավել վարչական վարույթների իրականացման գործընթացը: Այդ նպատակով Տեսչությունն իրականացնում է խորհրդատվություններ, նախապատրաստում շրջաբերականներ:

Ինչ վերաբերում է պետական բյուջե տուգանքներից մուտք չգործած գումարներին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջիններիս գործերը գտնվում են դատարաններում և, կախված համապատասխան դատարանների վճիռներից (որոշումներից), աստիճանաբար կվերականգնվեն պետական բյուջեում:

Արմավիրի տեսչության կարգադրագրերով նշանակված, սահմանված գումարից ցածր գումարներով տուգանքներ նշանակելու հետևանքով 315.0 հազ. դրամը պետական բյուջե վերականգնելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ նշված խախտումները կատարվել են 2010 թվականին, երբ մարզային տեսչությունը ղեկավարում էր նույն 2010 թվականին պաշտոնից ազատված Է. Արևշատյանը:

«Արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բացառություններն ու առարկությունները.

1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի ա/ կետով և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2334-Ն որոշման 2-րդ կետով հաստատված «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 10-րդ կետի 1-ին ենթակետով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին լիազորություն է վերապահվել «տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշակումը» ինչը և իրականացվել է 2010, 2011, 2012 թվականների ընթացքում:

Մասնավորապես.

2010 թվականի ընթացքում «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել են վեց տեխնիկական կանոնակարգեր, որոնցից «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը» հաստատվել է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի N 51-Ն որոշմամբ, «Քլորի արտադրության, օգտագործման, պահպանման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգը» հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 529-Ն որոշմամբ:

2011 թվականին «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել են ևս վեց տեխնիկական կանոնակարգեր, որոնցից «Տեխնոլոգիական խողովակաշարերի կոնստրուկցիայի և անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության ապահովման կանոնները» հաստատվել է ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 351-Ն որոշմամբ:

2012 թվականին ՀՀ կառավարության 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատվել և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»

ՊՈԱԿ-ի կողմից մշակվել ու ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Քարաղի նստվածքներում բնական գազի ստորերկրյա պահեստարանների վերակառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության ապահովման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»» ՀՀ կառավարության որոշման նախագիծը /26.03.2012թ/, ««Եղուկ ամոնիակի վերգետնյա պահեստարանների շահագործման տեխնիկական անվտանգության ապահովման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»» ՀՀ կառավարության որոշման նախագիծը /02.07.2012թ/, ««Օդի բաժանումից նյութերի արտադրման և օգտագործման ժամանակ տեխնիկական անվտանգության ապահովման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»» ՀՀ կառավարության որոշման նախագիծը /24.08.2012թ/, ««Ստորերկրյա կառույցների շինարարության ժամանակ տեխնիկական անվտանգության ապահովման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»» ՀՀ կառավարության որոշման նախագիծը /30.10.2012թ/: ««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ի կողմից մշակված և լիազոր մարմին ներկայացված նախագծերը գտնվում են քննարկումների տարբեր փուլերում:

Ինչ վերաբերվում է ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվության ««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ»» բաժնում արված մեջբերմանը, որ ««ՀՀ էկոնոմիկայի նախարարության գրության հիման վրա 2010 թվականին ՀՀ վարչապետի հանձնարարականով ժամանակավորապես կասեցվել է պետական մարմինների կողմից տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակումը և տեխնիկական կանոնակարգերի ընդունման գործընթացը, որից հետո՝ առ ստուգման պահը, նոր տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել»» չի համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ էկոնոմիկայի նախարարի գրության և ՀՀ վարչապետի հանձնարարականով մինչև 2010 թվականի նոյեմբեր ամիսը կասեցվել է կանոնակարգերի **ընդունման** գործընթացը և ոչ մշակման, իսկ ինչպես վերևում նշվեց ««Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»» ՀՀ օրենքով և ««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում ««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ը **մշակում** և լիազոր մարմին է ներկայացնում տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգեր:

2. Տեխնիկական կանոնակարգեր մշակելու հետ մեկտեղ ««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից 2010, 2011 և 2012 թվականների ընթացքում արտադրական վտանգավոր օբյեկտներում տեղի ունեցած /2010թ-ին 25, 2011թ-ին 16, 2012թ-ին 21/ դժբախտ դեպքերի վերաբերյալ իրականացվել են տեխնիկական քննություններ: Տեխնիկական քննությունների հետ կապված ծախսերը կատարվել են բյուջետային միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի ««Ծառայողական գործուղման

մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին»» N 2335-Ն որոշմամբ սահմանված չափերի սահմաններում:

3. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»» ՀՀ օրենքում 2010 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում կրճատվել են «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ին վերապահված գործառույթները: Կրճատված՝ հավատարմագրված անձանց հաշվառման, ռեստորի վարման գործառույթները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 28.07.2011թ-ի N 1132-Ն որոշմամբ վերապահվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նորաստեղծ «Հավատարմագրման և լիցենզավորման գործակալությանը», ինչի արդյունքում ՀՀ 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով կողմորոշիչ չափաքանակերով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ին 2012 թվականի համար նախատեսված 50.375.9 հազ.դրամ, կրճատվել է 9-ը հաստիք՝ 1 հաստիքի ծախսը ամսեկան կազմում է 78.870,4 դրամ, որից 65.000 դրամը աշխատավարձ, 13.870 դրամը մնացած ծախսերը, այսինքն 8.518.0 հազ. դրամ տարեկան գումարով:

Վերոգրյալից հետևում է, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն»» ՊՈԱԿ-ը կատարել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ և 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատված իր լիազորությունները և պարտականությունները:

«Հարտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովի բացատրություններն ու առարկությունները»

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհուրդն իր 2013 թվականի մարտի 22-ի թիվ 5/8 որոշման հավելվածի «ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ» բաժնի 5-րդ կետում նշել է, որ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովն առանց հիմնավորման կարճել է Տեսչության 04.05.2012թ որոշումով «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ի վերելակը տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցնելու համար նշանակված տուգանքը, և բավարարվել է նախազգուշացումով: «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»»

ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով այդ իրավախախտման համար՝ որպես տյուժի տեսակ, սահմանված է միայն տուգանք, և տվյալ դեպքում պետական բյուջեյի օգտին չի նշանակվել և չի գանձվել 1.000.0 հազ. դրամ: Այդ որոշումով հանձնաժողովը խախտել է **ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի** (*Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*), պահանջը:

1. Համաձայն **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի** դրույթների պահանջների, վարչական մարմինների կողմից կայացրած վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունքում բողոքարկման հանձնաժողովների (*վերադաս մարմին*) կողմից կայացրած վարչական ակտերը կարող են վիճարկվել միայն դատական կարգով: Ուստի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովի կողմից կայացրած վարչական ակտը համաձայն ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի գործառույթ է:

2. Ինչ վերաբերվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովի կողմից «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ի գլխավոր ինժիներ Աշոտ Գրիգորյանի բողոքի հիման վրա 04.05.2012թ. թիվ 024 որոշման բեկանելը հիմնավոր լինել չլինելուն, ապա ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովը սույն բողոքը քննելիս պարզել է, որ «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ում գոյություն ունի 2 վերելակ 1000 և 2000 կգ տարողությամբ, դրանք 04.09.2006թ. գրանցված են արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստրում թիվ 6/10358 վկայականի համաձայն, նրանցից մեկը (2000կգ) օրենքով սահմանված կարգով և ժամկետում անցել է տեխնիկական անվտանգության փորձաքննություն, իսկ մյուսը (1000կգ) դեռևս 2008 թվականի կեսերից **«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով** (*սահմանել տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ*

մշտական վերահսկողություն, այդ թվում՝ ստեղծել պարբերական տեխնիկական զննումներ հրականացնող հատուկ պատասխանատու կառույց կամ նշանակել հատուկ պատասխանատու անձ կամ այդ գործառույթների հրականացումը հանձնարարել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ տեխնիկական անվտանգության ծառայություն.) սահմանված պաշտոնյայի (<<Երևանի առաջին տպարան>> ՓԲԸ-ի գլխավոր ինժիներ Աշոտ Գրիգորյանի) կողմից կոնսերվացվել է (հոսանքազրկվել է, և դռները փակվել են կողպերով, 13.04.2012թ թիվ 065 վարչական արձանագրության մեջ նշում կա այդ մասին), այսինքն տնտեսվարող ոչ թե խախտել է <<**Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին**>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> կետի պահանջը՝ իր կողմից շահագործվող ԱՎՕ-ն՝ վերելակը ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան փորձաքննություն չի անցկացրել, այլ խախտել է <<**Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին**>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <<ժա>> կետի պահանջը՝ օրենքով սահմանված ժամկետում և կարգով կոնսերվացման մասին տեղյակ չի պահել արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստրին, որի համար ի տարբերություն <<**Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին**>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով՝ սահմանված սանկցիայի՝ տույժ (նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով), պետք է սահմանվեր <<**Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին**>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով՝ սահմանված սանկցիա՝ տույժ (նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով), այսինքն տնտեսվարողին ենթարկել են տյուժի չկատարած իրավախախտման համար:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովի կողմից չի վերավորակավորվել իրավախախտումը և չի կիրառվել <<**Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին**>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով՝ սահմանված սանկցիան՝ տույժ (նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով) այն պարզ պատճառով, որ տնտեսվարողն արդեն իսկ 2012 թվականի հունիսի 7-ին կատարելով

<<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <<ժա>> կետի պահանջը (հիմք՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովին ներկայացված <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի 07.06.2012թ թիվ 1238 արտադրական վրանգավոր օբյեկտի կոնսերվացման փաստաթղթերի տեղնիկական անվտանգության փորձարննության եզրակացությունը, որով հաստատվում է բեռնատար վերելակի կոնսերվացումը իրականացվել է համապատասխան մասնագետի կողմից, տեխնիկական անվտանգության բոլոր նորմերին համապատասխան) վերացրել էր իրավախախտումը: ԵՎ, քանի որ <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ն իր կողմից կայացրած յուրաքանչյուր արձանագրություն **<<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> ՀՀ օրենքի** դրույթներին համապատասխան 3 օրյա ժամկետում ուղարկում է արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստր, ուստի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովի համար դա հիմք է, որ արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստրում գրանցվել է սույն վերելակի կոնսերվացման փաստը, մինչև սույն գործով վերադասության կարգով բողոք ներկայացնելը:

Ուստի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով՝ **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 25-րդ հոդվածի (Նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:), 32-րդ հոդվածի 2-րդ պարբերության (Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:), 33-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին և 2-րդ կետերի (1) մեղավորի անկեղծ զղջումը. 2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը.), 252-րդ հոդվածի (Մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը**

հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:, **279-րդ հոդվածի (Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:**), <<**Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին**>> **ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի** դրույթներով, որոշել է բեկանել 04.05.2012թ. թիվ 024 որոշումը և կարճել վարչական վարույթը, բավարարվելով նախազգուշացումով: